

չեն ճանաշում։ Աստուծոյ արդարութեան ճանապարհների մասին գաղափար չունեն և խսկական կեանքը որոնելու մասին հոգ չեն տանում։

Մարդիկ թուով բազմանում են երկրի վրայ, նրանց հարստութիւնը բազմապատկւում, դիտութիւնը բեղմնաւորւում, նորանոր գիւտեր են լինում, միայն Աստուծոյ արդարութիւնը երկրի վրայ չի աճում այդ բոլորի համեմատ, չի բազմապատկւում Աւետարանի սէրը մարդկանց մէջ, չեն երեսում նոր անձնազո՞հ առաքեալներ, Քրիստոսի Հոգու աւետարերներ և Նրա կրօղներ։ Ուստի և—թէե Աստուծոյ աշխարհը շատ մեծ է, հրաշալի, գեղեցիկ, նրա միջի երանութիւններն ու ուրախութիւնները մարդուս համար անհամար, սակայն մարդկային կեանքը ծանր է և տիսաւր։ Մեզ տրուած է հրաշալի, հազուագիւտ այգի, ամեն ինչ յարմարեցրած է լաւագոյն մշակման համար, ցոյց են տրուած աշխատանքի ամենակատարեալ միջոցներ, բայց պտուղների առատութիւն չկայ։ Դրա պատճառը մենք ինքներու ենք—մենք չար մշակներ ենք։

Պետրովից Թարգմ. Գրիգոր Բինյ. Նոր-Արեւելանց.

Մ Ա Յ Ի Ա Յ Ո Ւ Թ Ի Ռ

Դեռ մայիսի 6.-ին գիշերուայ 9 ժամին Նորին Սուրբ Օծութիւն Աղջիս Վեհափառ Հայրապետը մի մասնաւոր խօսակցութեան ժամանակ արդէն հասած էր համարել ժողովրդին եկեղեցական սահմանադրութիւն տալու ժամը և առաջարկել կազմել տաճկահայոց սահմանադրութեան պէս մի բան, որ շուտ ստորագրի և հրատարակի։ Սակայն գորա համար հարկաւոր էր ժամանակ և ժողովրդական ներկայացուցիչների հրաւեր ու աշխատանք. բայց կարելի էր հրատարակել կոնդակ այդ մասին, ուստի մայիսի 10-ի

առաւօտեան 11 ժամին շատ զուարճալի հանգամանքնեարում՝ դրուեց այն նշանաւոր կոնդակի սել աշխարհաբար լեզուով, որը դարագլուխ պէտք է կազմէր ռուսահայոց եկեղեցական կեանքում:

Ճաշից յետոյ երեկոյեան 5 ժամին ծերունազարդ Հայրապետը ինքն անձամբ ուղղեց և մի երկու կէտ հանել տալով սեադրութիւնից, հրամայեց մաքուր արտագրել Երեկոյեան 7 ժամին Վեհափառը կարդաց Հայրապետական առաջին աշխարհաբար աւետարեր կոնդակը և զարմանալի ուրախութեամբ ստորագրեց այն: Վեհարանում եղածներն անմիջապէս շտապեցին նորին սրբութեան մօտ և ուրախութեան արցունքն աչքերին սկսան համբուրել այն հայրական խնամող ձեռքը, որը վերջապէս վերականգնեց հայ ժողովրդի դարաւոր իրաւունքը եկեղեցու բոլոր պաշտօնէից ընտրութեան նկատմամբ և մի քանի ջերմ խօսքերով շնորհակալութիւն յայտնեցին Վեհափառին: Հարկաւոր էր շուտով խմացնել թեմակալներին և մեծ քաղաքների հայ ազգաբնակութեան և ահա գրուեցին բազմաթիւ հեռագիրներ և ստորագրուեցին արագութեամբ: Վաղարշապատի հեռագրատունը բացէ միայն մինչև երեկոյեան 8 ժամը, բայց արդէն 10-ն էր լրանում, այս պատճառով եղիշէ և Յուսիկ վարդապետներն անձամբ հեռագրատուն տարան այդ հեռագիրները, խնդրեցին կայարանապետին ընդունել այն, որովհետև ցանկալի էր գէթ մեծ քաղաքներում Համբարձման օրը տօնել եկեղեցական վերածնութեան առաջին օրը, ինչպէս որ նա տօնուում է Տաճկաստանում: Հեռագիրներն արդէն ուղարկուած էին. հարկաւոր էր դարձեալ մի բան.—շուտով շարել տալ կոնդակը և տպել այնպէս, որ ժողովուրդը հետեւալ օրը պատարագի սկզբին կարսղանար ստանալ և կարդալ այդ՝ իրեն համար փափագելի նորութիւնը: Կանչուեց Մայր Աթոռիս տպարանի աւագ վարպետ Ղեռնդ Դարախանեանը և յանձնարարուեց ինչ որ պէտքն էր: